



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17320

1880

37

---

4-21

294

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԶԵԱՆ - ՈՒՍՈՒՄ-  
ՆԱՍԻՐԱՅ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՓԱՐԻԶԵԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

Հ. Էնֆիանեանց ևւ ընկ.

37

1880

4-21

2010

370  $\frac{37}{4-21}$  45  
2040-44 Ա.ՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԶԵՍՆ - ՈՒՍՈՒՄ-  
ՆԱՍԻՐԱՑ

ԵՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՓԱՐԻԶՈՒ



1004  
75288

Թ Ի Յ Լ Ի Ա

Ի տպարանի Հ. Լևոնյանցի և Ընկ.

1880



8704

Доз. цен. 1880 г. 8-го Мая Тифлисъ.

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԶԵԱՆ — ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ  
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հիմնալ ի ֆարիդ ի 11 սեպտեմբերի 1879  
ամի, առաջարկութեամբ և ջանիւք պ. Սի-  
մէօնի Ռափայէլեան:

Ա.

Նպատակ.

Յօդ. 1. Հայկազեան — Ուսումնասիրաց  
ընկերութիւնը՝ որոյ նպատակն անվո-  
ւիտիսելի է, 2, 3 և 4-րդ յօդուածոց տը-  
րամադրութեանց համապատասխանող  
աղքատ հայ պատանեկաց՝ ընկերութեան  
ծախիւքը Եւրոպիոյ մէջ (ա) բարձրա-

Մանօթ. ա). Ուսման մը կատարեալ  
չըջանին համար պէտք եղածին չափ ու-

գոյն ուսմունքներ (բ) սովորեցնել տալու կը ծառայէ, որպէս զի գիտութիւնք ծաւալին ի հայրենիս:

2. Առաջին յօդուածի տրամադրութիւնը վայելել փափաքող պատանիք պարտին յազգային ուսումնական խորհրդոյ ընտրեալ քննիչաց ներկայութեան քննութիւն անցնելով վաւերական վկայագիր մ'ստանալ հետեւեալ ուսմանց համար:

սեալ դասատուներ ունենալուն պէս, ընկերութիւնս սոյն ուսումը Հայաստանի մէջ սովորեցնել տալու պիտի ձեռնարկէ:

բ). Ընկերութեանս սովորեցնել տալիք ուսումններն են. երկրագործութիւն, ճարտարագործութիւն, հանքաբանութիւն, մեքենագործութիւն, վաճառականութիւն, ճարտարապետութիւն, իրաւագիտութիւն, բժշկութիւն և այլն:

Ա. Հայերէն լեզուի կատարեալ հմտութիւն.

Բ. Ազգային և ընդհանուր պատմութիւն.

Գ. Գաղղիերէն կամ անգղիերէն և կամ գերմաներէն.

Կ. Ընդհանուր աշխարհագրութիւն ընդարձակ.

Ե. Թուարանութիւն

Զ. Ալճէպրա.

Է. Երկրաչափութիւն.

Ը. Գծագրութիւն.

Թ. Սկզբունք բնական գիտութեանց և քիմիարանութեան.

Պարտին միանգամայն վաւերական ծընընդագիր մ' ու պատուաստի վկայագիր մ' ունենալ:

3. Ընկերութեան որդեգիրք պարտաւորեալ են ընկեր գրուելու:

4. Ընկերութեան որդեգիրք պարտա-

ւորեալ են ի Հայաստան երթալ իրենց ուսումն աւարտելէն վերջը՝ ազգային զպրոցաց միոյն մէջ երեք տարի անընդհատ չափաւոր թոշակով դասախօսութիւն ընելու համար: Այս մասին հարկ և արժան եղած երաշխաւորութիւնը պէտք է առնէ ազգային — ուսումնական խորհուրդը:

Բ.

5. Ընկերութեան կեդրոնատեղին է ի փարիզ, զոր կեդրոնական ժողովն իրաւունք ունի ուրիշ փողոց մը փոխադրելու, իննայոզական կտմ այլ կարեոր պատճառանօք, տեղափոխութիւնն ընելէ առաջ կամ անմիջապէս ինքը օրապրաց միջոցաւ հրատարակելու և իւր ներկայացուցչաց ծանուցանելու պայմանաւ:

6. Ընկերութեան կեդրոնատեղին փոխադրելի է նաև մի այլ եւրոպական քաղաք, եթէ կեդրոնական ժողովը՝ ներկա-

յացուցչաց կամ ճիւղերու մասնախմբոց հետ խորհրդակցութեամբ արժան դատէ, և կամ կեդրոնական ժողովոյ անբաւականութիւնն հաստատուի հիմնական փաստերով և ազգային ուսումնական խորհրդոյ վճռովը, ապա թէ ոչ միշտ ի փարիզ կը մնայ:

Գ.

Պայմանք ընկերակցութեան.

7. Ընկեր կընդունվի ամեն պատուաւոր անձ, առանց խտրութեան սեռի, կրօնի և ազգութեան, եթէ.

Ա. Ուղղակի կամ միջնորդութեամբ իւր փափաքն յայտնէ, որոյ վրայ կեդրոնական ժողովոյ դիւանը և իւր գաւառի կամ մօտավայրի ներկայացուցիչներն, կամ ճիւղին մասնախումբը իւր որոշումը կը տայ (տես յօդ. 61 և 65):

Բ. Գրաւոր կերպով հաւանութիւն տայ կանոնագրութեան և կեդրոնական ժողո-



վոյ իրաւասութիւնը ճանչնայ, Այս գը-  
րութեան մէջ պէտք է նշանակուած լի-  
նին իւր անունը, մականունը, տարիքը,  
ծննդատեղին և թուականը, ինչպէս նաև  
իւր վիճակն ու գրուած բաժինները:

8. Իւրաքանչիւր ընկեր ի սկզբան ըն-  
կերակցութեան պարտի վճարել:

ա. Հինգ (5) Փռանք իրր մուտք մի  
անգամ վճարելի:

բ. Մէկ ու կէս (1½) Փռանք կանո-  
նագրի և արձանագրութեանց ծախուց  
համար:

գ. Ամսական մի բաժնոյ համար մի  
Փռանք: Սակայն մուտքն ու արձանագ-  
րութեանց ծախքը միմիայն անգամ մը  
վճարելի գոլով, ընկեր մը կրնայ ըստ  
հաճոյից մէկ բաժնէ աւելի ալ ունենա-  
լու:

9. Իւրաքանչիւր ընկեր՝ կեդրոնական  
ժողովոյ ղիւանի ատենապետէն, ատե-

նադարէն և ներկայացուցչաց կամ  
ճիւղի ատենապետէն ստորագրեալ և ըն-  
կերութեան կնիքովը վաւերացեալ վկա-  
յագիր մը կստանայ, ու կը նշանակուին  
իւր անունը, պատուանունը, բաժիննե-  
րը և այլն, (տես յօդ. 7, պարբերութիւն բ.)

10. Ընկերք բարոյապէս պարտք և  
պատասխանատուութիւն կստանձնեն ըն-  
կերութեան յառաջադիմութեանն ու զար-  
գացմանը ամեն կերպով աշխատելու:

11. Տասը տարի անընդհատ ընկերակ-  
ցողք 400 Փռանք վճարելով՝ և աւելի  
նուազ ժամանակաւոր ընկերք 500 Փը-  
ռանք վճարելով՝ կրնան մշտնջենաւոր  
ընկեր դառնալ, յորմէ յետոյ այլ ևս  
պարտաւորեալ տուրքէ ազատ են:

12. Բանաւոր պատճառաւ բաժինը  
վճարելու անկարող ընկեր մը պարտի  
կեդրոնական ժողովոյ ղիւանին և կամ  
իւր գաւառի ներկայացուցչաց կամ ճիւ-



ղի մասնախմբի ատենապետին զրաւոր կերպով ծանուցանէ պայմանաժամ մը յայտնելով, որ մէկ տարիէ աւելի չէ կարելի, յորմէ յետոյ եթէ չվճարէ հրաժարեալ կը համարուի: Իսկ ընկեր մը, որ անպայման վեց ամիս յաջորդաբար չվճարէր, երկիցս զրաւոր ազդարարութիւն կընդունի երկու ամսուան մէջ, և եթէ չվճարէ, հրաժարեալ կը սեպուի:

13. Ընկերք իրաւունք ունին իրենց բաժինները մի կամ աւելի տարիներու համար կանխաւ վճարելու:

Գ.

Օժանդակ, մշտնջենաւոր և պատուոյ անդամք: Բարերարք:

14. Ութերորդ յօդուածի տրամադրութիւնը գործադրող օտարազգիք օժանդակ ընկեր կանուանին: Իրաւունք ունին կեդրոնական ժողովոյ նստերուն ներկայ զրտնուելու, իսկ հայերէն չգիտնալնուն հա-

մար վիճաբանութեանց և քուէարկութեանց չեն մասնակցիր:

15. Ի սկզբան ընկերակցութեան առնուազն հինգ հարիւր ֆուանք վճարողք մշտնջենաւոր ընկեր կը նշանակուին, և այնուհետեւ պարտաւորեալ տուրքէ ազատ են:

16. Կեդրոնական ժողովոյ հաւանութեամբ պատուոյ անդամ կարձանագրուին ամեն հայազգի կամ օտարազգի անձինք, որոնցմէ ընկերութիւնը բարոյական կարևոր ծառայութիւն մը կամ հազար ֆուանք ստացած է:

17. Ամեն անոնք՝ որք արտաքոյ կարգի նուէր մը և կամ կտակ մը կընծայեն, ընկերութեան բարերարն կանուանին:

18. Բարերար կը յիշուին նաև անոնք՝ որք ընկերութեան մի որդեգրին պաշտպան կանգնելով՝ նորա կեանքը կապահովեն մինչ ցվախճան նորա ուսման շըր-

ջանի: Ապահովութեան եղանակը կեդրոնական ժողովոյ հաւանութեանը վերապահեալ է:

Ե.

Պաշտօնական մարմինք.

19. Կեդրոնական ժողովէ զատ, ընկերութիւնն ունի նաև իւր ղիւանը, ներկայացուցիչը, ճիւղերու մասնախումբք և մասնաժողովք:

Զ.

Կեդրոնական ժողով.

20. Կեդրոնական ժողովը՝ որ ընկերութեան տնօրէն մարմինն է, կը բաղկանայ ֆարիզ գտնուող ընկերներէ և զաւառաց ներկայացուցիչներէն կամ ճիւղերու մասնախմբոց անդամներէն: Կեդրոնական ժողովը ընկերութիւնը կը ներկայացնէ, իւր նիստերուն մէջ ընկերութեան վերաբերեալ գործերը կորոշէ և կը կատարէ ղիւանի, ներկայացուցչաց և մասնաժողովոց ընտրութիւնը:

21. Կեդրոնական ժողովն իւր որոշումները ու ընտրութիւնները գաղտնի քուէարկութեամբ կը կատարէ. ընտրութիւնք վաւերական չեն համարուիր, եթէ առաջին քուէարկութեան մէջ բացարձակ առաւելութիւն չգոյանայ, այն ատեն երկրորդ քուէարկութեամբ համեմատական առաւելութիւնը բաւական կը համարուի. իսկ եթէ ընտրութեանց մէջ կրկին քուէարկութեամբ հաւասար քուէ գոյանայ, երկրորդին ընտրեալ կը համարուի:

22. Կեդրոնական ժողովն ամեն ամսոյ առաջին կիրակիին պարտաւորեալ նիստ կը կազմէ, և ատեանը կը բացուի ճիշդ ժամը մէկին:

23. Կեդրոնական ժողովոյ նիստերը օրինաւոր համարուելու համար դէթ տասն և վեց անդամոց ներկայութիւնն անհրաժեշտ է:

24. Առանց բանաւոր պատճառի և



կանխաւ գրաւոր ազդարարութեան ժողովոյ նիստերէն բացակայ գտնուողք ամեն մէկ անգամուան համար մէկ ֆռանք տուգանք կը վճարեն:

25. Կեդրոնական ժողովն արտաքոյ կարգի նիստ կը կազմէ զիւանի որոշմամբ:

26. Կեդրոնական ժողովն իրաւունք չունի ընկերութեան նպատակէն դուրս որ և է խնդրոյ մը՝ ընկերութեան ստացուածքէն ոչինչ յատկացնելու:

27. Կեդրոնական ժողովոյ մէջ կրօնական և քաղաքական խնդրոյ վրայ երբէք վիճարանութիւնք չդիտի ըլլան: Եթէ այս սկզբան դէմ վարմունք մը տեղի ունենայ, ատենապետն անգամ մը ազդարարելէ վերջը՝ իրաւունք ունի նիստը վերցնելու, եթէ վիճարանութիւնը չարունակուի:

28. Ստիպողական պարագաներու մէջ

Կեդրոնական ժողովն իրաւունք ունի իւր պատասխանատուութեան տակ որոշումներ տալու, անմիջապէս ներկայացուցչաց կամ ճիւղերու մասնախմբոց ծանուցանելով նոցա հաւանութիւնն ստանալու պայմանաւ:

29. Եթէ Կեդրոնական ժողովոյ անդամներէն մին առանց ատենապետէն խօսք ուղելու խօսի, զընկերն ընդմիջէ կամ անարգէ, մէկ խօսքով ժողովոյ օրինաւորութիւնը խանգարելու վարմանց մէջ գտնուի, նոյն նիստին մէջ առաջին անգամ ի կարգ կը կոչուի, երկրորդ անգամ խօսելու և քուէարկելու իրաւունքը կը կորսնցնէ, իսկ երրորդ անգամուն ժողովատեղիէն հեռանալ կը պարտաւորի, և եթէ մի քանի նիստերու մէջ սոյն վարմունքը շարունակէ, ժողովոյ որոշմամբ ընկերակցութիւնէ կը դադարի:

30. Կեդրոնական ժողովոյ նիստերէն



որ և է աղագաւ բացակայ գտնուողք կարող են իրենց քուէներն ու յօրակարգի զիտողութիւններն դիւանի ատենապետին յղել նամակաւ:

31. Եթէ կեդրոնական ժողովոյ անդամներէն մին ժողովոյ նիստերէն բացակայ գտնուի, նոյն նիստերուն մէջ արուած որոշմանց վրայ բերանացի զիտողութիւն մ'ընելու իրաւունք չունի, իսկ ազատ է իւր զիտողութիւններն գրով ներկայացնել իբր առաջակութիւն:

32. Եթէ որ և է խնդրոյ մը վրայ կեդրոնական ժողովոյ մէջ համաձայնութիւն չգոյանայ, և կամ ժողովն եղած առաջարկութիւն մը աւելի լուրջ եղանակաւ իմաստասիրել և լուսաբանել ուզէ, մասնաժողով մ'ընտրելով խնդիրը նմա կը յանձնէ, որպէս զի քննութեան արդիւնքը դիւանի տեղեկագրէ:

33. Կեդրոնական ժողովը՝ տարւոյն

վերջը իւր ելմտացոյցը մանրամասնաբար լրագրաց միջոցաւ հրատարակելէ զատ, ներկայացուցչաց կամ ճիւղերու մասնախումբոց ալ կը ծանուցանէ, ազդարարելով որ եթէ ընկերք զիտողութիւն մը ունին, մինչև երկու ամիս յայտնեն. սոյն պայմանաժամէն վերջը զիտողութիւնք ընդունելի չեն:

34. Կեդրոնական ժողովը ամեն տարուայ սեպտեմբեր 11-ին արտաքոյ կարգի ժողով կը կազմէ համարառու մասնաժողովոյ տեղեկագիրը լսելու և նոր դիւանի ընտրութիւնը կատարելու համար. նոյն երեկոյ ընկերութեան տարեդարձի խնջոյքը տեղի կունենայ ընկերաց իսկական ծախիւքը:

Է.

Դիւան.

35. Կեդրոնական ժողովոյ դիւանը՝ որ ընկերութեան գործադիր մարմինն է,

կը բաղկանայ ինն անդամներէ, որք են ատենապետ, փոխ—ատենապետ, ատենադպիր, երկու փոխ—ատենադպիրք, գանձապետ, համարակալ և երկու գործակատար — խորհրդականք. սոքա պարտին հրապարակաւ երդնուլ իրենց պաշտօնը անկեղծութեամբ, անշահասիրութեամբ և հաւատարմութեամբ կատարելու համար:

36. Գիւանի պաշտօնը կը տեէ ամբողջ մի տարի, իսկ եթէ անդամոց մին հրաժարի կամ հեռանայ, յօդ. 21-րդի տրամադրութեան համեմատ իւր յաջորդը կընտրուի, որոյ պաշտօնը կը վերջանայ իւր ընկերաց պաշտօնավարութեանն հետ:

37. Գիւանը տասն և հինգ օր պարտաւորեալ նիստ կը կազմէ, և ստիպողական պարագաներու մէջ ատենապետին և ատենադպիրն որոշմամբը արտա-

քոյ կարգի ժողով գնահատելու պիտի աւանդուին:

38. Ատենապետը և փոխ—ատենապետը թէ կեդրոնական ժողովոյ և թէ դիւանի մէջ միևնոյն պաշտօնը կը վարեն: Սոցա պարտքն է կանոնադրին և կեդրոնական ժողովոյ ու դիւանի որոշմանցն անթերի գործադրութեանն հսկել, և վիճարանութեանց և քուէարկութեանց օրինաւորութիւնն ապահովել: Սոքա պարտին միմեանց յաջորդել, եթէ մին կամ միւսը կուզեն վիճարանութեանց մասնակցիլ: Իրենց բացակայութեանը՝ անդամոց երկացոյնը ժողովոյ նախագահելով այս պաշտօնը կը վարէ:

39. Ատենադպիրը թղթակցութեանց կզբաղի, օրակարգը կը կարգադրէ, կեդրոնական ժողովոյ և ժողովի ատենադրութեանց օրինաւորութեանը կը հսկէ և ընկերութեան պատկանեալ գրութիւնները կը պահպանէ:



1004



40. Փոխ — ատենադպիրը կեդրոնական ժողովոյ նիստերուն մէջ արձանագրութիւնները կը գրեն, իսկ մասնաւորապէս մին կեդրոնական ժողովոյ և միւսը զիււանի ատենագրութիւնները կը խմբագրեն:

41. Գանձապետին պաշտօնն է ընկերաց բաժիններն ստանալ ի կեդրոնատեղին, դրահատան հետ եզած գործողութիւնները, ընկերութեան Եկամտից հըսկել, և կեդրոնական ժողովոյ ու զիւանի սահմանեալ իրաւասութեամբն որոշված ծախսերը մատակարարել:

42. Գանձապետն ուղղակի և անհատապէս պատասխանատու ըլլալով կեդրոնական ժողովոյ, զիւանի, ներկայացուցչաց կամ ճիւղերու մասնախմբոց և այլ և այլ կողմանէ յանուն և ի հաշիւ ընկերութեան յանձնուած արժողութեանց համար, պարտի ապահով և պաշտօնա-

պէս վաւերացեալ երաշխաւորութիւն մը տալ, իրեն յանձնուած արժողութիւններն անյապաղ ընկերութեան դրամատանն յանձնել, և հարիւր ֆուսնքէն աւելի ստակ չպահել իւր քովը, ապա թէ ոչ իւր թերութեամբն ու անհոգութեամբը հասուցած ֆեսսը՝ ինչ որ ալ ըլլայ, ինքն անձամբ կամ իւր երաշխաւորը պարտի տուծել:

43. Գանձապետը՝ կեդրոնական ժողովոյ կամ զիւանի որոշած մի ծախսը մատակարարելու համար, պարտի ատենապետէ, և համարակալէ մտորագրեալ և ընկերութեան կնիքովը վաւերացեալ արտօնագիր մ'ունենալ, առանց որոյ ըրած ծախսերը ընդունելի չլինելով՝ ինքը կամ իւր երաշխաւորը պարտի տուծել:

44. Համարակալին պաշտօնն է ելմտից հաշուետետրը բռնել, ատենապետին և ատենադպրին հետ անդորրագրերն և



արտօնագրերն ստորագրել, ընկերութեան  
դրամատանն յանձնուած արժողութեանց  
վրայ հսկել, և ամեն երեք ամիս ընկե-  
րութեան դրամական վիճակը կեդրոնա-  
կան ժողովոյ ներկայացնել զիւանէ վա-  
ւերացեալ:

45. Գործակատար — խորհրդականաց  
պաշտօնն է զիւանի կողմանէ յանձնուած  
պաշտօնները կատարել, առանձին կամ  
զիւանի որոշմամբ մի այլ անդամի հետ  
ընկերակցութեամբ, և իրենց գործառնու-  
թեան կամ քննութեան արդիւնքը զի-  
ւանի տեղեկագրել:

46. Դիւանն իրաւունք չունի՝ առանց  
կեդրոնական ժողովոյ հաւանութեան,  
թուղթ, գրիչ, մելան, տետր, պահարան,  
ժողովատեղւոյ և նամակաց ծախք, և  
այլ սոցա նման առօրէական անհրաժեշտ  
պիտոյքներէ դուրս որ և է ծախսմ' ընե-  
լու:

47. Ստիպողական պարագաներու մէջ  
զիւանը իւր պատասխանատուութեամբը  
որոշումներ կրնայ տալ, բայց պարտի  
անմիջապէս գումարելի կեդրոնական ժո-  
ղովոյ հաշիւ և բացատրութիւն տալ իւր  
որոշմանց վրայ:

48. Դիւանի որոշումները վաւերական  
համարուելու համար, գէթ իւր վեց ան-  
դամոց հաւանութիւնն անհրաժեշտ է:

49. Եթէ զիւանը իւր անդամոց միոյն  
վրայ անվստահ լինի, յետ քննութեան  
կրնայ նորա հրաժարումը անմիջապէս  
կեդրոնական ժողովոյ ներկայացնել:

50. Եթէ զիւանի անդամներէն մին՝  
առանց բանաւոր պատճառի և կանխաւ  
գրաւոր ազդարարութեան՝ յաջորդաբար  
չորս անգամ զիւանի նիստերէն բացա-  
կայ գտնուի հրաժարեալ կը համարուի:

51. Ընկերութեան վերաբերեալ ամեն  
տեսակ պաշտօնական գրութիւնք՝ որք

ղիւանէ կը բղխին, առանց ատենապետի կամ փոխ—ատենապետի և ատենադըպրի ստորագրութեանց և ընկերութեան կնքոյն վաւերական չին համարուիր:

52. Ընկերութեան երկու կնիքներէն մին մասնաւոր տփին մէջ փակուած և ղիւանի ամբողջ անդամոց կողմանէ զմուռուած գործակատար—սորհրդականաց միոյն քով կը պահուի, և գործածելին փոխ—ատենապետին քով կը մնայ:

53. Գլխանի անդամ ըլլալու համար, ընտրելին քսան և մէկ տարին լրացուցած ըլլալու է:

Ը.

Ներկայացուցիչք.

54. Ընկերութիւնը ամեն հայաբնակ մեծ քաղաքաց մէջ իւր ներկայացուցիչներն ունի, առ որս պէտք է ղիմենոյն քաղաքի ընկերները՝ իրենց բաժինը վը-

ճարելու, անդորրադրերն ստանալու և առաջարկութիւնները ներկայացնելու համար:

55. Կեդրոնական ժողովը՝ ղիւանի կողմանէ պատրաստուած ընտրելաց եռապատիկ և սրբագրելի ցանկի մը մէջէն կընտրէ իւր ներկայացուցիչները, որոց թիւն առ նուազն երկուք է միևնոյն քաղաքի համար:

56. Ներկայացուցիչք՝ իրենց ընտրութիւնն ընդունած օրէն կեդրոնական ժողովոյ անդամ են, նորա գործառնութեանց, իրաւանց և պարտուց կը մասնակցին, և պարտին ըստ հաճոյից 8-րդ կամ 15, 61 և 17-րդ յօդուածոց միոյն տրամադրած ընկերակցութեան պարտքերը կատարել:

57. Ներկայացուցիչք իրաւունք ունին երենց գործառնութեան ղիւրութեանն համար շրջակայ քաղաքաց մէջ ազգասիրարար գործող օժանդակ—գործակա-



տարներ ունենալու, որոց համար ներկայացուցիչք պատասխանատու են: Սթանդակ գործակատարք պարտին նոյնպէս ընկեր գրուիլ իրենց ընտրութիւնն ընդունած ժամանակ, և իրենց հրահանգներն ու տեղեկութիւնները ներկայացուցիչներէն սպասել և նոցա հետ թղթակցել:

58. Ներկայացուցիչք՝ ընկերակցութեան առաջարկութիւն մ'ընդունելէ և հաւանութիւն տալէ վերջը, պարտին նոյն ընկերոջ յատկութեանց և պայմաններուն վրայ համառօտ և ճշգրիտ տեղեկագրով մը կեղրոնական ժողովոյ ղիւանին վաւերացմանը ներկայացնել:

59. Ներկայացուցիչք պարտին ընկերաց ամսավճարքէն և մասնաւորաց նուէրներէն գոյացած գումարը կամ ընկերութեան դրամատան նոյն քաղաքի ճիւղին յանձնել մշտապէս, և կամ ամեն երեք ամիս ուղղակի կեղրոնական ժողո-

վոյ ղիւանին յղել, եթէ նոյն քաղաքի մէջ դրամատուն մը չէ նշանակուած, սակայն եթէ այս միջոցին մէջ հաւաքուած գումարը հարիւր ֆուանքն անցնի, անմիջապէս ապահով դրամատան մը մէջ ի շահ ածելու են, որպէս զի եղած շահովը փոխադրութեան ծախսերը վճարուելով, մայր—գումարին վնաս մը չը հասնի:

60. Ներկայացուցիչք բարոյապէս պատասխանատու են իրենց դիտողութիւնները, քուէները և ընկերաց դիտողութիւնները ու առաջարկութիւնները անյապաղ կեղրոնական ժողովոյ ղիւանին յղելու, որպէս զի ընկերութեան գործառնութեանը վնաս մը չպատահի:

Թ.

ձիւղք և ճիւղերու մասնախումբք.

61. Եթէ որ և է քաղաքի ընկերաց թիւը բացի ներկայացուցչաց առ նուա-



զըն յիսունի հասնի, ընկերութեան մէկ ճիւղը կը համարուի, այն ատեն սոյն ճիւղը կազմող յիսուն ընկերք իրաւունք կստանան կեդրոնական ժողովոյ ներկայացուցչաց թուոյն հաւասար թուով ներկայացուցիչներ ընտրելու ըստ 21-րդ յօդուածի:

62. Ճիւղերու մասնախումբք՝ որք կեդրոնական ժողովոյ և ճիւղերու ներկայացուցիչներէն կը բաղկանան, ներկայացուցչաց իրաւանց և պարտուց կը մասնակցին, և իրենց գործառնութեան պաշտօնները իրենց մէջ կը բաշխին քուէարկութեամբ:

Ժ.

Հասոյթ և ստացուածք.

63. Ընկերութիւնը՝ ընկերաց ամուսնաւորութեն և մասնաւորաց նուէրներէն զատ մասնաւոր հասութից միջոցներու կրնայ դիմել կեդրոնական ժողովոյ որոշմամբ:

64. Ընկերութիւնը՝ իւր ամբողջ հասութից հարիւրին յիսունը իբր պահեստի դրամագլուխ կը պահէ իւր դրամատան մէջ յանուն և ի հաշիւ ընկերութեան և եւրոպական տէրութեանց ապահով արժեթղթոց վերածելով, զորս ոչ ոք առնելու իրաւունք ունի, և մնացեալ յիսունը պատրաստ դրամ պահելով՝ նոյն դրամատան մէջ, բերած շահովն հանդերձ իւր նպատակին և կարեոր ծախուց կը գործածէ:

65. Ընկերութիւնը իւր որդեգրաց ամեն պէտքերը հոգալու պարտաւորեալ ըլլալով՝ իւր պատրաստի դրամին մէջ որդեգրի մը ուսման չըջանին ամբողջութեանն համար վճռուած գումարը մինչև որ հաւաքած չըլլայ, ուրիշ մը բերելու չկրնար ձեռնարկել:

Ժ.Ա.

Համարառու մասնաժողով.

66. Համարառու մասնաժողովը կը բաղկանայ հինգ անդամներէ, զորս կը ընտրեն կեդրոնական ժողովն և ներկայացուցիչք կամ ճիւղերու մասնախումբք ըստ 21-րդ յօդուածի:

67. Համարառու մասնաժողովոյ պաշտօնն է ղիւանի տարեկան պաշտօնավարութեան հաշիւը քննել, ընկերութեան ստացուածոց գոյութիւնը ապահովել և իւր քննութեան արդիւնքը կեդրոնական ժողովոյ ներկայացնել և ներկայացուցչաց տեղեկագրել, ամեն տարւոյ սեպտեմբերի 11-ին:

68. Գիւանի անդամ մը համարառու մասնաժողովոյ անդամ չկրնար ընտրուիլ:

ԺԲ.

Ընդհանուր կանոնք.

69. Ընկերք առհասարակ որ տեղացի որ ըլլան, փարիզ գտնուած ժամանակներն, ղիւանի և այլ մասնաժողովոց նիս-

տերուն ներկայ գտնուելու իրաւունք ունին իբր ունկնդիր, և կեդրոնական ժողովոյ մէջ վիճարանութեանց և քուէարկութեանց կը մասնակցին:

70. Ընտրութեանց ժամանակ հրաժարեալք վերընտրելի են:

71. Ընկերք իրենց ամսավճարքէն, մասնաւորաց նուէրներէն և առ հասարակ ընկերութեան սեպհական ստացուածքէն երբէք բան մը յետս պահանջելու իրաւունք չունին, թէ ընկեր մնան, և թէ իրենց ազատ կամօքը կամ կեդրոնական ժողովոյ վճռովը հրաժարին:

72. Ինչ որ ալ ըլլայ ընկերաց տխրութիւնն ու բաժնոց քանակութիւնը, վիճաբանութեանց և քուէարկութեանց մէջ հաւասար ձայն ունին:

73. Իրամամբ ընկերութեան յառաջադիմութեանն ու շահուց որ և է միջոցաւ վլասող ընկեր մը իւր ներկայութեա-



նը կեղրոնական ժողովոյ մէջ քննութեան  
ենթարկուելով՝ ընկերակցութենէ կար-  
տաքսուի, այս մասին լիակատար իրա-  
ւունք կը վերապահէ կեղրոնական ժողո-  
վոն իւր որոշմանց վրայ, որք անդառ-  
նալի են:

74. Ընկերք իրենց առաջարկութիւն-  
ները գրաւոր պէտք է մատուցանեն դի-  
ւանի, ներկայացուցչաց կամ ճիւղերու  
մասնախմբոց, կեղրոնական ժողովոյ նիս-  
տերէն մինչ տասն և հինգ օր առաջ:

75. Ընկերութիւնն ունի իւր մետա-  
ղեայ, արծաթեայ և ոսկեայ պատուա-  
նշանները, որոնցմով կը վարձատրէ  
իւր աշխոյժ ընկերաց բարոյական ծա-  
ռայութիւնները:

ԺԳ.

վերաքննութիւն.

76. կանոնագիրս վերաքննելի է ի 11  
սեպտեմբեր 1881 որոյ համար առ նոս ազն

եօթն անդամներէ բաղկացեալ վերաքնն-  
նիչ մասնաժողով մը կընտրուի ըստ 21-րդ  
յօդուածի. սակայն կեղրոնական ժողովն  
իրաւունք ունի, ներկայացուցչաց կամ  
ճիւղերու մասնախմբոց հետ խորհրդակ-  
ցութեամբ և կեղրոնական ժողովոյ ան-  
դամոց երեք քառորդի հաւանութեամբը,  
նորանոր յօդուածներ աւելցնել, առանց  
բան մը պակսեցնելու, եթէ այս յաւե-  
լուածոյ կարեորութիւնը տեսնուի մինչ  
ի վերաքննութիւն:

Ի դիմաց կեղրոնական ժողովոյ.

Ատենաշաբթի

Ատենապետ

Ա. Բ. Ռ. Բ. Բ. Բ. Բ.

Յ. Թ. Կ. Կ. Կ. Կ.


23 ապրիլ 1880





Diese ...  
 ...  
 ...  
 ...  
 ...  
 ...  
 ...  
 ...  
 ...  
 ...  
 ...  
 ...

...  
 ...  
 ...



2013

« Ազգային գրադարան

17320



NL0050180

